ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ
«ԻՆԿԱԾ ԲԵՐԴԻ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ» ԴՐԱՄԱՆ

Բյուզանդական կայսրությունը վերստին հզորացավ X դ. երկրորդ կեսին և XI դարի սկզբներին: 1045 թվականին Արևելքում տիրացավ Հայաստանին՝ վերջ տալով Բագրատունյաց թագավորությանը: Հոռոմները աստիճանաբար հայրենի երկրից հեռացրին հայերին՝ կտրելով իրենց արմատներից, հող նախապատրաստեցին հայոց թագավորության անկման համար:

Ճիշտ է, կորցրել էինք մեր թագավորությունը, բայց սոսկալին այն էր, որ շատերը կորցրել էին նաև այն վերականգնելու հավատը:

Եվ արդեն եկել էր ժամանակը, ու հայերի համար այլևս զուտ կրոնական հարց չկար, կար քաղաքական հարց. այն է՝ անկախության հաստատումը, որն իրականացնելու էր ոչ թե հոգևոր դասը, այլ մարտի դաշտ սլացող իշխաններն՝ իրենց տոկուն զորագնդերով: Թուրք հրոսակներին դիմակայած ու լեռներում ամրացած բերդատեր իշխանները կարճ ժամանակ անց պիտի հասկանային, որ իրենց նպատակների համար հայերին այստեղ բերած հոռոմ տերերը այլևս չկային, և ժամանակն էր հասել՝ տնօրինելու սեփական բախտը: Չէ՞ որ հայը ազատ լեռների ազատ զավակն է՝ կռվող զինվոր ու գերության մեջ անգամ անհնազանդ: Ինչպես վկայում է ժամանակագիրը.«Հայերը ամենքը զինվոր էին, գրեթե նույնչափ ուժեղ ու վայրենի, որչափ իրենց լեռներն, ուր կբնակեին»:

Կիլիկիան Հայոց նոր Տուն դարձնելու ամենամեծ արգելքը Բյուզանդիան էր (Հովհաննես ու Մանուել կայսրերը՝ իրենց Անդրոնիկոս, Կալամոն, Վռանան զորավարներով), որը դարեր շարունակ աշխատել է հունական ներբանի տակ ստրկացնել Կիլիկիան: Երբ նրանք մի վերջին անգամ էլ փորձեցին նույնն անել, խայտառակ պարտվեցին և վռնդվեցին Ռուբենի կողմից: Բյուզանդիան ստիպված էր հայցել Ուրբանոս II պապի օգնությունը:

Այն ժամանակ, երբ քոչվորները Մանազկերտի ճակատամարտում ոչնչացրին Բյուզանդիայի ողջ ուժը, և Կիլիկիայում մնացին բյուզանդահպատակ մի շարք հայկական զորամասեր, նրանց մեջ էլ գտնվեցին ժամանակի ծնունդ համարվող բանիմաց ու ծեռներեց անձինք, ովքեր ուժով կամ խորամանկությամբ փորձ արեցին հասնել իրենց նպատակին: Դրանց մեջ առաջիններից էր հայ իշխան Փիլարտոս Վարաժնունին, որը փորձեց զենքի ուժով

իրեն ենթարկել մյուս հայ իշխաններին, խմբել ցաք ու ցրիվ եղած ուժերը, միավորել իշխանություն ստեղծելու նպատակով (հայ իշխանները վաղուց էին երազել Բյուզանդիայի համաձայնությամբ բուն Հայաստանից դուրս ստեղծել հայկական պետականություն):

Թեև Վարաժնունու ծրագրերը չիրականացան, այնուամենայնիվ նրան հաջողվեց ամրանալ Կիլիկիայում, հող նախապատրաստել հայկական նոր հարստության սկզբնավորման համար: 80-ականներին էլ հենց Կիլիկիայի արևելքում առաջացավ ևս մի հայկական իշխանություն Գող Վասիլի իշխանությունը Քեսուն կենտրոնով: Վարաժնունու հետնորդներից մեկն էր Գող Վասիլը Քեսունի տերը, որի մասին գովեստով է խոսում նաև Ուռհայեցի պատմիչը նշելով նրա դերը հայկական նոր պետականության ստեղծման պատմության մեջ: Շուրջ մեկ դար առաջ Փիլարտոս Վարաժնունին այս բերդը խլել էր թուրքերից ու տվել Վասիլ իշխանին, որն (ըստ երևույթին ոչ այնքան լավ բարքի կամ կռվելու ձևի պատճառով) վաստակել էր Գող մականունը: Սակայն այդ Գող Վասիլն անշուշտ փորձված ու խիզախ զորավար էր «հայի կտոր», «սարի արջ», որ հետագայում զգալի չափով ընդարձակեց իր տիրույթները՝ Հոնի, Ռապան, Բերդուս, Համսուր, Կարկառ ամրոցներով: Սակայն Գող Վասիլի հզոր իշխանությունն էլ եդեսիայի ճակատագիրն ունեցավ:

Ահա պատմական այս անցքերի ու այս հերոսների նախընտրության վրա է կանգնում Շանթ դրամատուրգը: 1918թ. Հայաստանի Հանրապետության հռչակումն ու պետական արարողությունները ոգեկոչել էին մեծ գեղագետին ու արթնացրել հայ պետականության պատմություն դարձած երբեմնի փառահեղ հուշը:

Թերթելով Կիլիկիայի պատմության էջերը՝ գեղագետը պիտի հայտնագործեր բանական մարդու նոր որակներ, եսի նոր մղումներ ու ընթերցողին տաներ ցյուղակոտոր «ինկած բերդը», պիտի հարց տար ու ինքն էլ պատասխաներ.

«ԶՈՐԱԿԱՆ – Թուրքեր, քյուրդեր, պարսիկ սելջուկ, ո՞ր մեկին դեմ դնե խեղճ ժողովուրդը, փչացավ, փչացավ մեր աշխարհը...

ԻՇԽԱՆ - Հինը փչացավ, կհիմնենք նորը: Հոն ողողվեցավ, ա՜յ կխմբվինք հոս:

ԵՏ ԴԱՐՁՈՂԸ - Մեր ժողովուրդը չի ոչնչանար, մեր իշխանությունը չի կորչիր, մի վախենար...»:

Շանթը պիտի ձայներ պատմական դեպքերին ու դեմքերին՝ դարձնելով նրանց գրական հերոսներ, այսպես՝ առաջինը Քեսունի իշխան Գող

Վասիլին, նրա բնում անգղացած որդեկորույս իշխանուհուն՝ Աննային. նրա գլուխն ու մարմինը ամբողջովին սևերի մեջ, (ճգնավորին հիշեցնող) դայակին. իշխանուհուն վշտակից եղեգնատիպ Շաղինեին, իրար հակապատկեր Սեպուհ և Ատոմ իշխանազուններին մարդը չսիրող պիրկ շրթունքներով պրոդդ-սեբատեի ծգտող հելլենուհուն՝ Սոֆյային իր սպասուհի Իրինայի հետ, դեպի հանդերձյալ կյանք տանող աթոռում թաղված. նոր ազգականի շտեմարանից կերակրվող մի ավելորդ բերան դարձած Անդրոնիկոսին, ուրիշի անկումն իրեն ոտքատեղ շինող Կամսարական իշխանին. տիրոջ խորհրդատու ու գործընկեր, կյանքն ապրած հաստաբուն կաղնուն՝ Ապիրատ իշխանին, գունդուկծիկ, փոքրամարմին Շահենին, կաղ ու միամիտ Ուսեփին և վերջապես դահճին՝ քարադեմք Խուրշիտին: Մեկտեղում է սրանց՝ գեղարվեստական տարածություն դարձնելով Քեսունի բերդը. գեղարվեստական ժամանակ՝ իրական ժամանակի մի պահը:

Պայծառ լուսնկային կատարվել էր զազրելի ու սահմռկեցուցիչ ոճիրը: Առկա է նախճիրը, առկա է նաև գայլերի ու գառների միջավայրը, կան նաև մատաղացուները, որոնցով էլ պայմանավորված է դրամայի մուտքն ու ելքը: Ամրոց մտնողները գայլեր են հիշեցնում իշխանուհուն, գազաններ, որոնք արժանի են միայն նզովքի: Հատկապես Գող Վասիլի կողքին հայտնված այն սևացած դեմքով մարդը, որի համար ինկած բերդի տիրուհին չի ներում իրեն ու ընկուզենու պես տապալված ամուսնուն՝ իր դուռը զարկած ապաստան խնդրող այդ մարդուն խղճալու համար:

Արծանացած իշխանուհին, որի կորցրած մի օրն արդեն դարձել է կարոտ, տեղում չէ, ու դժբախտության պահին կարևորող հուշը նրան տարել է Զատկի զով ու պայծառ այն առավոտը, երբ սեմին վրա գառը կմորթեին (ևս մի խորհուրդ. կար մի ժամանակ, որ հանուն աստվածների մարդը զոհաբերում էր նույնիսկ առաջնեկին: Իսկ այստեղ նույնը կատարվում էր նույն մարդու ձեռքով՝ հանուն իր նպատակի ու վրեժի) այն օրը, երբ կյանքում առաջին անգամ գաղտուկ լացեց իշխանուհին՝ ծածկելով դեմքը, ու հիշողության մորթվող գառան մայունն էլ մթագնած ուղեղի թելադրանքով դարձավ ճիչ՝ զավակնե՞րս...

Այժմ իշխանուհուն կյանքին կապողը միայն մի կարճ նայվածք է ընդամենը: Նա կամենում է նայել գիշատչի աչքերի խորքը, ուր սովորաբար թաքնվում է մարդկային հոգին, եթե այն կա: Աստծու նախախնամությամբ իրեն հանձնված բերդում հայտնվում է Քեսունի իշխանը՝ Գող Վասիլը՝ որպես հաղթության նշան, ոտքով դոփում տեղում: Նույն պահին ավելի ազնիվ է Քեսունի իշխանը՝ բացահայտելով իր էությունը, նպատակը, որն էլ

պատրաստ է խոստովանել կնոջ գեղեցկությունն ու թովչանքը: Նրան առաջին իսկ պահից գրավում է իշխանուհու նետ-հայացքը, որից մի տեսակ գալարվում է իշխանի սիրտը և հաճույք, և ցավ պատճառելով տիրոջը: Ավելի շատ հաճույք, որովհետև դրանով արդեն կռվի հրավեր էր ստացել այդ վագրի ծագեն. կռվողը կին էր և այն էլ՝ հմայիչ: Իսկ իր ունեցածը խեղճ ու կրակ, տնքոցով ու լացով գերեզման իջած սովորական կին էր եղել պարզապես: Սա ուրիշ խմորից է, բոլորովին տարբեր իրեն հանդիպած կանանցից: Առաջին հանդիպումից դա է զգում Վասիլը, սիրով ընդունում նրա կռվի հրավերը՝ ցանկանալով մոտիկից ճանաչել վերջինիս, որովհետև բերդը ընկած է, բայց կռիվը դեռ ոչ ավարտված:

Դաժան պիտի լինի մենամարտը, որովհետև Վասիլը իրենով պիտի հասունացնի արժանի մրցակցին, նրան խորհելու տեղիք տա, թե երբևէ ինքն եղել է բախտավոր կին, սիրած կամ սիրված: Մանկամարդ կինը, որպես ուժեղ հերոսուհի՝ պիտի գործի Քեսունի բերդից: Օր օրի պիտի կապվեին իրար այս հերոսները, որովհետև տեղեր ու դերեր ունեին փոխանակելու:

Դրամայի առաջին գործողություններից դեռ ուշքի չեկած ընթերցողը ականատես է լինում մի տեսարանի, որ կարծես մարդկային ուղեղին անհասանելի է: Ուժերի գերլարումով ու ջղերի պրկանքով ծգտում է հասկանալ կատարվածը: Երևի դա ամենախոսուն տեսարանն է դրամայի, որն ասես մի պահ քեզ պոկում է Ինկած բերդից, տանում հեռու ու բերում ետ, ուր մի փարչ գինու պես, Վասիլը ըմբոշխնել կուզե իշխանուհուն, իր հաղթանակը՝ բերդի ավերակների վրա փռելով իր ցանկության սավանը, առաջարկելով իշխանուհուն մարած մոմի տեղ վառել նորը՝ կյանքի կայծքարը քսելով երկաթին՝ իրեն նոր կայծի, նոր բոցի համար: Ավելի վայրի դարձնելու համար այդ գեղեցկությունը՝ հիշեցնում է կատարվածի մանրամասները, (այսօր սպանել եմ ամուսինդ, խլել բերդդ, վերացրել զավակներդ) համոզված, որ կտանի իր ետևից այդ քարացած փխրուն ավազը: Արբում է կանացի զգլխիչ գեղեցկությամբ, ցանկանում է վայելել խաղողի՝ եռք հիշեցնող մի թաս գինու պես: Կին, որն հիշեցնում է վագրի ծագի ու իր դիմադրությամբ ավելի ցանկալի դարձնում իրեն: Նա ցանկանում է, որ քրմուհի հիշեցնող այդ կինը խաղողի որթի հավաքած եռքով, գինոտ շուրթերով նզովի իր անձը: Ահա այն պահը, որ հերոսը, բռնակալը բացվում է ի տես բոլորի, մինչև վերջ: Ուշաթափ կնոջ գլուխն առնելով իր թևերի մեջ՝ նա չի ընդունում կանացի այդ թուլությունը: Նրա համար միևնույնն է. կին իր գրկի մեջ է ուշքի գալու, նրա գրկի մեջ է շարժվելու կնոջ սառած արյունը: Եթե մինչ այդ հերոսին ճանաչում էիր մականունով միայն, ապա հիմա քո դեմ կանգնած տեսնում ես մի նոր

մարդու՝ հոգու անսպառ ուժով, անսպառ ներքին էներգիայով, ընթացքի մարդուն, նպատակի մարդուն, որի ետը անսանձ է, ընթացքն առանց դադարի, հայացքը միշտ դեպի առաջ: Ահա թե ինչու իր հաշիվներում պիտի սխալվեր իշխանուհի Աննան՝ հույս ունենալով, թե կկանգնեցնի ու կստիպի ետ նայել նրան՝ չիմանալով, որ Վասիլի համար ետ անցածը, պարզապես մի մութ ու սև պարապ լուսամուտ է: Ուրեմն որևէ կերպ (բնական կամ անբնական) պիտի պարպվեր մարդկային մարմնի ու հոգու կուտակված անափ էներգիան: Կամային, ենթարկող, անհանգիստ, շտապող, քաղաքագետ այս հերոսին անծանոթ է կարեկցանքը, (այլ կերպ ծիծաղելի կդառնար) որովհետև միայն արյունով են անցել նրա՝ դեպի փառք տանող ճամփաները:

Շանթը մեզ ուղեկցում է Քեսունի բերդ լուռ ականատեսը դառնալու հայ-բյուզանդական հարաբերությունների, որի կրողներն են բերդում ապրող հունական եռյակը՝ իշխանուհի Սոֆյան, սենեկապետուհի Իրինան և իր թիկնաթոռից փիլիսոփայող Անդրոնիկոսը, որոնք կայսրության աչքն ու ականջն էին Քեսունի բերդում՝ յուրաքանչյուրն իր առաքելությամբ:

Իշխանուհի Սոֆյան, որին հայրը նետել էր սուլթանի բարեկամ այս հայի ձեռքը, որ սուլթանի ձեռքից ազատի իր կալվածքների մնացած մասը, շարունակ բողոքում էր այդտեղ՝ քարերի մեջ հայտնվելու ու նրանց մեջ քարանալու համար: Բայց նա լավ է գիտակցում իր պարտքը հարազատ պետության՝ Բյուզանդիայի հանդեպ, որի շահերի պաշտպանն է ինքը Քեսունում: Չէ՞ որ ինքը հոր հետ շատ չարչարվեց, որ իշխանը դառնա սեբաստե: Որովհետև բյուզանդական արքունիքը, երբ տիտղոս է շնորհում, ապա լոկ այն պատճառով, որ գործածվի և աշխարհն էլ իմանա, թե իշխանը սիրելին ու պաշտպանն է բյուզանդական կայսրին: Իսկ երբ իրենց իշխանության սահմաններն էլ մի քիչ լայնանան, կնվաճեն պան-սեբաստա, պրոդոսեբաստն տիտղոսները: Իշխանուհին գիտի, որ իրենով է պայմանավորված հողերի ու այդ ուժեղ, պետքի մարդու կապը Բյուզանդիայի հետ, որն էլ ստիպեց նրան չգերադասել այրի կնոջ կյանքը հարազատ երկրում:

Բայց իշխանուհին միաժամանակ լավ քաղաքագետ է և չի եկել այս լեռնցիներին բարոյականության ու վայելչագեղության դասեր տալու, այլ ուրիշ նպատակ ունի՝ մեջտեղից մաքրել անհավատ լատիններին:

Այլ է Քեսունի բերդը՝ իշխանուհի Սոֆյայի բերած բյուզանդական նիստուկացով, ուր Վասիլը տանում է վրեժի կայծն իր բերդից առած իշխանուհի Աննային՝ վարժեցնելու համար նոր կյանքին, բացելու հոգին, չէ որ հոգի ըսածը, ըստ նրա, սովորություն է, վիճակ, և մարդս էլ՝ ունակ հարմարվելու ցանկացած վիճակի: Այստեղ «ինկած բերդի իշխանուհի» արհամարհական

կարգավիճակով Աննան ակնառու մրցակից է դառնում երկու կանանց, որոնց մոտ դեռ չէր ավարտվել ներքին կռիվը: Աննայի հայտնությամբ նրանք մի կողմ են շպրտվում: Նրա խոշոր ու ինչ-որ բան փնտրող աչքերից զգուշանում է բարոնեսան, որն աշխատում է կանացի հնարանքով ինքնահորդորման գնալ, մտորել.«Նրա արյունը հասարակ է, իսկ հասարակ արյունը միշտ էլ անառակ է ու լիրբ»:

Հենց այստեղ էլ, այս բերդում է, որ սկսվում է արդեն աշխարհիկ գայթակղություններին օտարացած հերոսուհու կերպարանափոխությունը, գալիս է մի պահ, որ ինքն իրեն էլ չի ճանաչում: Իշխանի հանդեպ հոգեբանական հաղթանակը թույլ է տալիս հերոսուհուն առաջանալու պահանջելով համատեղ կիսել նրա իշխանությունը, դիրքն ու անունը:

Վարպետորեն է գործում հեղինակի գրիչը՝ հանդիպեցնելով կյանքում մենակ մնացած երկու տառապյալ, ջարդված հոգիներին Աննային ու Սեպուհին, և վերջինիս խոստովանեցնում իր ակամա բերդ մտնելը: Սեպուհը Շանթի սիրած քրիստոնյա հերոսն է, բայց ապաժամյա, թույլ, դատապարտված մահվան, որովհետև անհիրավ աշխարհի մեջ չանհիրավելը շատ է դժվար, գայլերի մեջ գառ լինելը ինքնըստինքյան մահ է: Նա հասկանում է՝ մարդը հեռու չէ գայլի բարքերեն ու ճաշակեն: Սեպուհը պատճառաբանում է, թե այդ գիշակերների նման, մարդն էլ կսիրե արյուն ոթել, բզկտել, լլկել ու լափել, բայց միամիտ է Սեպուհը՝ կարծելով, թե գայլն ու ոչխարը կարող են եղբայրանալ, որն էլ ծերունի Ադրոնիկոսի մոտ ծամածռություն ու չնհավատություն է առաջացնում:

Հերոսն իրենով ուզում է խարազանել շուրջբոլորը կատարվող անարդարությունները: Նա իշխանուհուն բացում է ամրոցի ամբարած գաղտնիքները, աչքը բացած օրեն տեսած հափշտակությունը, թալանը, դավն ու դավաճանությունը, անգամ բերդի իսկական անունը (անգղներու բույն), որի բնակիչները իսկական անվանակիրներ են, նույն օրենքով գործողներ:

Վրեժը Աննային իշխանի մոտ է տանում, որը վերջինիս զարմանք չի պատճառում, սուր լեռնային ծաղկի հոտով դեռ արբած, այն խենթ գիշերը վայելած իշխանին, անտեղյակ, որ չարագուշակ եռանկյունու է վերածվել խաղը: Վասիլն ուրախությամբ է լցվում՝ տեսնելով, որ Աննան կամաց-կամաց ձգվում է իրեն, որովհետև իշխանը կարևորություն չէր տալիս այդ ցանցառ հոռոմ կնոջ ներկայությանն ու արարքներին, որովհետև երկար ժամանակ իրեն պիտի պահեր ինկած բերդի իշխանուհու բաց դիմակը և նրա հետ անցկացրած խենթ գիշերվա հիշողությունը: Նա իր կողքին ուրվագծում է իր համախոհին ու գործընկերոջը: Գրավում է նրան ու աչքերը կապում հերոսուհու ճկուն,

ռազմագետ միտքը, նշանառության դիպուկությունը՝ մոռացնել տալով անմեկնելի գաղտնիքը՝ կին լինելը, այն էլ սարդ - կին: Աննան առանց շտապելու, չսխալվելով՝ անում է հերթական քայլերը. նախ՝ հիշեցնում իշխանի մականունը, բերդանունը, սպանությունն ու թունավորումը: Իշխանն առաջարկում է հանել դիմակները, իսկ Աննան իր հերթական կանացի խաղով փորձում է կասկածի ենթարկել Վասիլի ուժը, որ ինքը կին է, կարիք ունի գգվանքի, ուժեղ, պաշտպան տղամարդու: Նետում է խայծը՝ բերան բերելով «Թորոս» անունը: Վասիլը Շահինին իր այլայլվածությունը՝ որպես անհեթեթ կնոջ պատմության հետևանք է ներկայացնում: Բայց որդի պես կրծում է իշխանի միտքը, երբ Շահինն էլ ավելացնում է, թե առանց կրակի մուխ չըլլար: Երեք տարի շարունակ գիշերվա ու ցերեկվա մտածմունքն էր Թորոս իշխանը, որն իհարկե ծածուկ կպահեր: Վրեժխնդիր կինը հոր և որդու բախումը հասցնում է մինչև վերջ՝ կասկածներ առաջացնելով նույնիսկ հավատարիմ մարդկանց հանդեպ, մարդիկ, որոնց պատվին երբևէ ինչ-որ ձևով դիպել է իշխանը: Ավելին՝ հոր մոտ փորձում է գերագնահատել այդ թույլ կոչված արարածին՝ անդրանիկ զավակին՝ առաջարկելով իշխանությունը ինքնակամ հանձնե նրան: Հիշեցնում է, որ մեկն ու մեկը պետք է խաղից դուրս գա: Այդ խոսքերը մեռցնող ծաղր էր բերդեր առած իշխանի համար (հատկապես հերոսուհու հատիկ-հատիկ արտասանած «Քեսունի տեր» բառակապակցությունը): Այս ամենը մտորելու տեղիք է տալիս իշխանին, թե ինքն արդեն հին է, անցած: Ու ակամա հիշում է որդու խոսքերը, թե քայլ առ քայլ պիտի հետևի իրեն, պիտի փոխե, պիտի քանդե...Պետք էր բացառիկ բան մտածել: Իշխանին թվում է, թե բնությունն անգամ դավ կնյութե իր դեմ, վամ կլարե: Սպասվող պատահարի վախն ապրող «սարն առաջարկող, բայց դրանից վախեցող Շահինին հավատացնում է կեցվածք ընդունած իշխանը, թե ինքն ընկնող չէ, չունի իր հավասարը թե ուժով, թե կիրքով և թե տածած ահով»: Դա է ապացուցում նրա կատարած հաջորդ քայլը: Իշխանը մարմնով փակում է որդու դեմ ելքի ճամփան: Գազանի նայվածքով և սոսկալի ծռված դեմքով նա իր որդուն հրում է անդունդին նայող բաց պատուհանը՝ դեպի մահ:

Անսպասելի էր իշխանի համար որդու քայլը, չնայած գիտեր, որ նա իր ծնունդով բնության սխալմունքն էր ընդամենը, կին հիշեցնող թույլ էակ, բայց ոչ սպասածը՝ դավաճան: Երազ է թվում իշխանին իրականությունը. «Սա ի՞նչ ձեռք է, որ ձեզի կզինե իմ դեմս»: Ապշեցնող է նաև հոր և որդու հանդիպումը դեպի անդունդ բացվող սենյակում, ուր Շանքը պատկերում է, թե մինչև ուր կարող է հասնել բանական մարդը:

Աննան Վասիլի նման կանգ չի առնում: Աստծու անունից, նրա նախախնամությամբ են խոսում ու գործում այս երկու գլխավոր հերոսները: Եթե Վասիլն ասում է, թե Աստված այս բերդն էլ տվեց իրեն, ապա իշխանուհի Աննան Սաբեթին հավատացնում է, թե Աստված կբանա դռներն իր դեմ, ճանապարհ կցուցանե և Աստված իր հետ է: Այդ ոգևորությամբ էլ նա համատեղում է խաղը նաև կրտսեր որդու՝ Ատոմի հետ: Եթե Վասիլ իշխանը Աննայի մեջ կտեսնի իր գործընկերոջը, կեսին, ապա որդին՝ մենակ մնացած Սեպուհը, կփնտրե հոգեընկերոջը, ապա կրտսերը հոր իսկական ժառանգը՝ Ատոմը, կգտնի սիրո աստվածուհուն, որի առջև պատրաստ է հավերժ ծնկի գալ: Պարմանին չգիտի հավատա նրա շուրթերի խոսածին, թե աչքերի ասածին, չէ որ այդ աչքերը շարունակ եղել են իր դաշնակիցը, իսկ շրթունքները՝ թշնամի: Ավելի հաջողված տեսարան է սա, որտեղ խաղում տանուլ տվողը հավասարապես պետք լիներ ինքը՝ խաղը նախաձեռնողը: Իշխանուհին գաղտնի, խորհրդավոր հայացքներով պիտի ձգեր ու գալարուկի թփի նման իրեն փաթաթեր նաև Ատոմին, որովհետև գլխի մեջ մտքերը կեփվեին, որովհետև այս անգամ երկաթի կտորը պիտի հաներ երկաթի դեմ՝ անտեղյակ, որ մի չլսված որս էր կատարվելու: Ձկնորսն ինքն էր կախվելու իր նետած թելից, որը չի վրիպում դայակի խոհուն հայացքից, որն էլ ճիգ է անում նրան ետ պահել կրակից, զգուշացնում, որ շատ դժվար է հոգիներու հետ խաղալը, չէ որ խղճուկ բան է մարդը, առավել ևս այր մարդը:

Բայց իզուր, Քեսունի բերդում անգղների այդ բնում, կինն ավելի է անգղացել, դարձել ավելի վտանգավոր, քան եղածները: Նա այստեղ հանգել է այն մտքին, որ խղճուկ բան է մարդ կոչվածը, էրիկ մարդը ավելի ևս և նրանց մեջն էլ քաջն ու ազնիվը ամենից ավելի: Էլ ավելորդ են դայակի գայթակղիչ բայցերը: Իշխանուհին չի ընդունում ընտրված ցավի փոխարեն երկնքից տրված սփոփանքը:

Կրակն իր ձեռքով վառել էր իշխանուհին, որից պիտի բոցավառվեր նաև ինքը: Եթե իր լարած որոգայթի առաջին մասում Աննան հանդես էր գալիս վրեժն իրականացնող սգավոր մայր, (արդեն անգղացած՝ չգթաց իր նմանակին՝ Սեպուհին) ապա երկրորդ մասում դանդաղում են նրա քայլերը, ձգվում, դառնում չարչարանաց շաբաթ, քանի որ հոգում արթնացել էր կինը, այրին, անհրավեր սերը, որը պատրաստվում էր կուլ տալ նրան, և որի հորձանքից անկարող էր ոտքի վրա մնալ իշխանուհին: Չհասցրեց հասկանալ, թե ինչպես գութը վերածվեց սիրո, այնպիսի մի սիրո, որի մասին չէր էլ երազել իր ողջ կյանքում: Սերը նրան ստիպում է զգուշացնել զոհին.

«Ես թույն եմ, ես սուր եմ, ես մահ եմ դաժան, փախիր այս բերդեն, այս աշխարհեն»: Եվ հոր դեմ թույնի չափը ավելացնելու համար հիշեցնում է, որ նա բորենի է և որդեսպան: Հիշեցնում է նաև իր հետ պատահած գիշերվա մանրամասները: Ու ասես բացվում են կնոջ կուչ եկած թևերը գրկելու համար, որն էլ խնդրանք էր գգվելու, հոգին մաքրելու, ոխը հանելու համար:

Բայց քաջ է Ատոմը, կռվել գիտեցող, անվախ: Եվ արյան խաղով որդին էլ վճիռ ընդունելիս հոր նման ետ նայել չգիտի: Նրա համար աշխարհ ըսածը զույգ մը մութ անհուն թավիշ աչքեր է: Ով դիպչի այդ աշխարհին, պիտի խորտակվի: Ակամայից հիշում ես հորը:

Ի վերջո դժբախտ, վրիժառու մայրն իր ճիրաններում խեղդում է սիրուց արթնացող կնոջը, և ճակատագրական դաժան երկունքով ծնվում է վճիռը, որի աշխարհ գալով վերանում են ցավերն ու գալարումները ու այն պիտի գլտորի մինչև հատակը, որովհետև «ցնորքը՝ իգուր, գութը անտեղի, սերը՝ հանցավոր»: Կանացի սատանայական խաղին չի դիմանում ոչ նորատի երիտասարդը, ոչ հասուն այրը: Նա ուժերի վերջին լարումով մեկին պատրաստում է զարկելու, մյուսին՝ պաշտպանվելու: Ընթերցողը դրամայում ականատես է դառնում ցնցող իրավիճակներին: Խիստ հոգեբանական է դրամայի վերջին տեսարանը որով ավարտվում է հեղինակի ասելիքը, որն էլ նպաստում է հերոսների ինքնաբացահայտմանը:

Վերջապես Վասիլը զգում է իր դեմ զինող ձեռքի առկայությունը բերդում, բայց արդեն շատ էր ուշ: Գող Վասիլը, որ իր ողջ կյանքի ընթացքում շարունակ կփնտրեր արդարը՝ կշեռքը կշեռքին, հանդիպել էր մեկին, որը ոչ միայն հպարտ էր, իշխելը հասկացող և հրաշալի կշռող, այլ նաև դիւլուկ նշան բռնող և այն էլ՝ ընդամենը կին: Կին, որի աչքերի ատելությունը արդեն հալվել է ու էլ չի ծգում իշխանին: Նա հասկանում է, որ Աննան բացառիկ կին է՝ արժանի բացառիկ մահվան, իր մահը ապրող, իր մահը վայելող մահվան: Նա ծայնում է ուշացած Խուրշիտին: Բայց հերոսուհին չի դառնում անգղների բույն հիշեցնող աշտարակի կանխագուշակված երրորդ մահապարտը, որին ըստ սեռային պատկանելիության կախելու էին գիսակներից: Անկարելի է դառնում դա, որովհետև իրեն դաս տվող հերոսի նման իշխանուհին վարպետ զարկով հնչեցնում է խաղի ավարտը: Մի պահ Վասիլը ասես հաշտվում է այն մտքին, որ ինքը խաբված է, և Աննային տիրելու կիրքը խլացրել ու բթացրել է իրեն: Բայց նորից անհողդողդ է Շանթի կերտած պատմական այս հերոսը, որը չնայած ցնցված ու ջարդված, բայց չի ընդունում պարտությունը և կանգնած տեղը իրենը չհամարելով ու եղածը ծանր պատահար ընդունելով՝ ընտրում է կյանքի ճանապարհը: Նա ուզում է ապացուցել, որ թույլն ու տկարը կմնա

ճամփին, տոկունն է, որ միայն տեղ կհասնի: Չէ որ խիղճը անհարմար բեռ է, ետադարձ հայացք, թուլություն: Ուրեմն հարկ չկա ետ նայել: Այդ սկզբունքով է գործում Շանթի այս պատմական հերոսը:

Եվ իշխանուհու տաք կրքերն ու մոլեգնությունն էլ դեմ է առնում մի սառցաբեկորի, որովհետև գող Վասիլի վարանումը լոկ մի պահ է տևում: Քեսունի իշխան Վասիլի տիպարով հեղինակը նույն տեղում երկու իմաստով ճշմարտությունն է հայտնաբերում քանդելու ու շինելու (միշտ նորը շինելու) և մահն իր ճամփով, կյանքն իր ասել է թե ամեն մարդ իր ճամփով. չէ որ այլ են մարդիկ ու այլ նրանց վիճակված ճակատագիրը:

Ասել է, թե «Մահն իր ճամփով, կյանքն իր ճամփով», ասել է, թե հերոսուհու ինքնասպանությունը հույսի հատման վերջին աղաղակն է և կյանքի գեղեցիկն էլ հնի քանդելն ու նորի շինելն է:

«Դեպի վեր, ահա թե մինչև ուր է տանում «Ինկած բերդի իշխանուհին» դրաման, որի ճանաչման համար պետք է երթալ: Բարու ու չարի սահմաններեն դենը. Ուժի և կամքի հաղթանակի փառաբանումն է այն, ընդդեմ մարդկային պայմանադրական կամ բնազդական բոլոր զգացումներու»,- այսպես է արտահայտվել դրամայի մասին Գ.Իփեկյանը: Այս երկով Շանթը ուզում է հիշեցնել, որ մենք հայերս, ոչ թե դարավերջիկ, այլ դարասկզբիկ ժողովուրդ ենք. որ իր ազգը հայը, ամբողջ աշխարհի մոդելն է իր համար: Այստեղից էլ պատմական վերջին դրամաները բացում են հեղինակի խորհրդավոր խոհերը և անհատական հայացքներն ու տրամադրությունը. «Երբ տրամադրությունդ մոխրագույն է, գրածիդ գույները բնական կերպով կգորշանան»,-վկայում է հեղինակը:

Ստեղծագործությունում կա ոգեղեն մթնոլորտ, խորաթափանց միտք, սահմռկեցուցիչ տեսարաններ, հոգեբանական վերլուծություններ, մարդկային կերպարների շոշափելի ու իրական պատկերներ, կյանքի համընդհանուր հարցերի արծագանքներ, որոնք գրականություն են բերում գեղագիտական նոր մոդելներ: